

Résumé

QUELQUES TEMOIGNAGES ECRITS
SUR LE PEINTRE MINAS
(XVII^e SIECLE)

LEVON G. MINASSIAN

Le peintre Minas, du XVII^e siècle, dont parle l'historien Arak'el Davrižec'i, a été longtemps oublié par la critique récente. Dernièrement, lors de la restauration du monastère arménien de la Nouvelle Djoulfa, une inscription avec le nom de Minas a été découverte; l'auteur en avait parlé dans une notice parue dans «Hask», LI (1972), p. 267-270. Ces dernières années, pendant les travaux de catalogation des archives du monastère, quatorze documents courts sont venus à la lumière, datés 1632, 1637, 1639 et 1658. Ils font l'objet de cette présente notice et sont d'un remarquable intérêt par le fait qu'ils témoignent la grande estime dont Minas jouissait à la cour et chez la haute aristocratie persane. Il était en effet le peintre officiel de la cour et était considéré comme le maître des peintres ses contemporains. La vénération que l'on portait pour son art est attestée aussi par les privilèges qui lui avait été octroyés par la cour.

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ – INFORMATION SCIENTIFIQUES

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ Գ. ՍԻՄՊՈԶԻՈՒՄ

ՄԻՂԱՆՈՅ – ՎԻՉԵՆՑԱ – ՎԵՆԵՏԻԿ

(25 Սեպտ. – 1 Հոկտ. 1981)

25 Սեպտեմբերին մինչև 1 Հոկտեմբեր 1981 տեղի ունեցավ Հայ Արուեստի Գ. Միջազգային Սիմպոզիումը Իտալիոյ Միլան, Վիչենցա եւ Վենետիկ քաղաքներուն մէջ, իբրեւ բնանիւթ ունենալով՝ «Հայ արուեստի յուշարձաններուն ծանօթութիւնը, պահպանումը, վերապրումը»:

Սիմպոզիումը կազմակերպուած էր Միլանոյի Հայ Մշակոյթի Ուսումնասիրութեան եւ Վաւերագրումի Կեդրոնին կողմէ՝ գործակցութեամբ Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիային եւ Ս. Ղազարի Մխիթարեան Ակադեմիային: Պատուոյ յանձնախումբին մաս կը կազմէին Իտալիոյ Կրթական նախարարը՝ Կուիտոյ Պոտրաթոյ, Իտալիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան Մշակութային, Գիտական ու Գիտարուեստական Գործակցութեան Բաժնին Ընդհ. Տնօրէն՝ Սերճոյ Ռոմանոյ, Գիտական Հետազոտութիւններու Իտալիոյ Ազգային Խորհուրդի Նախագահը՝ Էրնեսթոյ Քուարիարելլոյ, Իտալիոյ Աւագ Դեսպանը Սովետական Միութեան մօտ՝ Ճովաննի Միլոլոյոյ, Միլանոյի, Վիչենցայի, Վենետիկի քաղաքապետները, Մխիթարեան Միաբանութեան Ընդհ. Արքահայր՝ Գերպ. Հ. Պօղոս Վրդ. Անանեան, «Պանքա Քաթթուիքա տէլ Վենետիկ»ի Ընդհ. Տնօրէն՝ Վահան Բազարճըզեան եւ այլ քաղաքական եւ ակադեմիական հեղինակութիւններ:

Սիմպոզիումի Գիտական Յանձնաժողովը կազմուած էր՝ հետեւեալ անձնակազմով: Ատրիանոյ Ալփակոյ-Նովելլոյ՝ վարիչ Միլանոյի Հայ Մշակոյթի Ուսումնասիրութեան եւ Վաւերագրումի Կեդրոնին, Էրմանոյ Արսլան՝ Տնօրէն Միլանոյի Հնախօսական Թանգարանին, Ճանքարլոյ Պոլոնիեզի՝ դասախօս Միլանոյի «Սաբրոյ

Գրուորէ՝ Համալսարանին, Ռենաթոյ Ձեւեղէ՝ վարիչ Վիչենցայի «Անտրէա Փալլատիոյ» Կաճառին, Փաօլոյ Գունէոյ՝ դասախօս Հռոմի Պետական Համալսարանին, Ճոլլիոյ Ենի՝ դասախօս Թորինոյի Փոլիթեքնիքին, Նինա Գաուլիչիչի՝ Տեսուչ Պերկամոյի Համալսարանի Օտար Լեզուներու եւ Գրականութիւններու Մասնաճիւղին, Կապրիէլլա Ուլուհոճեան՝ դասախօս Պոլոնիայի Համալսարանին։ Միեւնոյն յանձնաժողովին մաս կը կադմէին հայրենի գիտնականներէն՝ Փրոֆ. Ռուբէն Զարեան, Տնօրէն Ակադեմիայի Արուեստի Ինստիտուտին, եւ Դոկտ. Արմէն Զարեան՝ գիտաշխատակից միեւնոյն Ինստիտուտին եւ համակարգիչ Հայ-Իտալ մշակութային փոխյարաբերութիւններուն։

Սիմպոզիումի գործադիր յանձնախումբը կը բաղկանար հետեւեւալ անուններէն։ Ա. Ալիակոյ-Նովելլոյ, Հրանդ Բամպակեան, Ճ. Ենի, Կ. Ուլուհոճեան, Ալպերթոյ Փենսա։ Սիմպոզիումի քարտուղարութիւնը կը վարէր Կ. Ուլուհոճեան՝ օժանդակ ունենալով Կեդրոնի մնայուն քարտուղարուհի Տիէ. Հերմինէ Աւագեանը։

Սիմպոզիումի կազմակերպութեան իրենց վեհանձն ու վճռական աջակցութիւնը բերեր էին հայ եւ օտար բազմաթիւ հիմնարկներ ու անհատներ. «Գալուստ Կիւլպէնկեան» եւ «Ալեքս Մանուկեան» հիմնարկները, Իտալիոյ Արտ. Գործոց, Մշակութային Հարստութիւններու եւ Կրթական Նախարարութիւնները, Իտալիոյ Գիտական Հետազոտութիւններու Ազգային Խորհուրդը, Միլանի, Վիչենցայի, Վենետիկի, Գասթելֆրանքոյ Վենետիկի քաղաքապետարանային Հաստատութիւնները, Լոմպարտիա եւ Վենետիկ նահանգներուն Զբօսաշրջային Գործակալարութիւնները, Փիացցոլա սուլ Պրենթայի «Վիլլա Գոնթարինի-Սիմէա» հիմնարկին վարչութիւնը։ Անհատական ձեռնարկներու միջեւ մասնաւորապէս յիշատակելի են՝ Ազատեան, Ալակիզոյ, Բամպակեան, Մանուկեան, Մետիկեան, Շելլէֆեան, Սրապեան, Փափագեան ընտանիքները։

Սիմպոզիումի օրերուն՝ իրենց եռանդուն ու սիրայօժար աջակցութիւնը ընծայեցին վարդադիր յանձնախումբին՝ օրիորդներ Գարմէն Լիչիթրա, Բիարա Կամպարա, Բիարա Հայկանոյ Մժիկեան, Սիմոնա Սթրինկինի եւ Մարինա Օրթոլանի, ուսանողուհիներ Փատուլայի, Վենետիկի եւ Պոլոնիայի համալսարաններուն։

Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիային եւ Սովետական Միութեան պատուիրակութիւնը Իտալիա հասաւ 24 Սեպտեմբերին՝ գլխաւորութեամբ Հայաստանի Նախարարաց Խորհուրդի Նախագահութեան Առաջին Տեղակալ՝ Ալեքսանդր Կիրակոսեանի։ Պատուիրակութիւնը Մարիենսայի օդակայանին մէջ դիմաւորուեցաւ Պոլաթոյ Արզիցիոյի փոխ-Քաղաքապետին կողմէ, որ հիւրերը առաջնորդեց, պաշտօնական չարխումբի ընկերակցութեամբ, Պոլաթոյ Արզիցիոյի

Գաղաքապետարանը. հոս հանդիսաւոր ընդունելութիւն տեղի ունեցաւ քաղաքական եւ զինուորական իշխանութիւններու ներկայութեամբ։ Միլանի միջազգային «Մարիենսա» սաւառնակայանը կը դռնուի, արդարեւ, Պոլաթոյ Արզիցիոյ քաղաքին սահմաններուն մէջ։ Պատուիրակութիւնը՝ այս փոքրիկ, բայց արուեստով հարուստ քաղաքի թանգարանին նուիրեց հին խաչքարի մը նմանատիպ կադապարուած վերաբրտադրութիւնը, զոր պատրաստեց էր՝ ուրիշ բազմաթիւ խաչքարերու նմանատիպ վերաբրտադրութիւններուն հետ՝ իտալացի հնախօյններու խումբ մը, առաջնորդութեամբ ճրտալ. Ա. Փենսայի։

Տեղատարափ անձրեւը ջրոյյատրեց որ լրիւ իրադրոժուէր յետմիջօրէի ծրագրերը շրջակայքի տեսարժան վայրերուն եւ պատմական յուշարձաններուն այցելութեան, որոնց միայն մէկ մասը կարելի եղաւ տեսնել։ Երեկոյեան ժամը ութին՝ խումբը կը հասնէր Միլան, ուր կ'առաջնորդուէր «Սթրինէ» պալատը՝ զոր քաղաքապետարանը ներկայիս կը գործածէ իբրեւ իշեւան պաշտօնական հիւրերու։

Սեպտեմբեր 25ի առաւօտեան 10ին, «Սթրինէ»ի ունկնդրութիւններու դահլիճին մէջ կը կատարուէր Սիմպոզիումի պաշտօնական բացումը։ Իտալիոյ Կառավարութիւնը կը ներկայացնէր Դեսպան Սերճոյ Ռոմանոյ։ Սովետ. Հայաստանը կը ներկայացնէր փոխ-վարչապետ Կիրակոսեան։ Իրանի Մշակութի Նախարարութիւնը կը ներկայացնէին Տեարք՝ Վարուժան Առաքելեան եւ Ռոստոմ Ոսկանեան։ Իսկ Թուրքիոյ Հնութիւններու եւ Թանգարաններու Ընդհ. Տնօրէն Փրոֆ. Նուրետին Եարտմաճը հեռագրով մը կը յայտնէր իր հաւանութիւնը եւ բարեմաղթութիւնները՝ չկարողանալով անձամբ ներկայ ըլլալ։

Դեսպան Սերճոյ Ռոմանոյ բովանդակալից գեկոյցով մը կը բացատրէր այս գիտատնօրէն կարեւորութիւնը Իտալիոյ մշակութային յանձնառութիւններու ընդհանուր շրջածիրին մէջ։ Ապա խօսք կ'առնէին կարգաւ՝ Փրոֆ. Ա. Ալիակոյ-Նովելլոյ, որ կը ներկայացնէր Միլանոյի Հայ Մշակութի Կեդրոնին գործունէութիւնը, Փրոֆ. Ճանքարլոյ Պոլոնիեզի, Գերալ. Դոկտ. Էնրիքոյ Կալպիաթի եւ Դոկտ. Արմէն Զարեան, որոնք այլեւայլ տեսանկիւններէ կը մերձենային հայ-իտալ պատմական ու մշակութային փոխ-յարաբերութիւններու հարցերուն։

Կէսօրէ վերջ, ժամը 3ին, Սիմպոզիումի մասնակցողները կ'առաջնորդուէին այցելելու Լէոնարտոյի վերջին Ընթրիքը եւ այլ դըլուխ-գործոցներ։ Ժամը 17.30ին՝ Միլանի Հնախօսական Թանգարանին մէջ տեղի կ'ունենար պաշտօնական յանձնումը՝ Հայաստանի Պետութեան վրդմէ նոյն Թանգարանին նուիրուած խաչքարին։ ԺԳ-ԺԴ դարերու գործ այս խաչքարին նուէրը կը փորհրդանշէ Հայերու ե-

րախառն ռեզնահատանքը հայ ճարտարապետության եւ արուեստին ի նպաստ Խտալիոյ եւ յատկապէս Միլանի մէջ տարուած Կոթողային աշխատանքին: Այս արարողութենէն վերջ, ժամը 8ին, հիւրերը՝ մասնաւոր կառքերով՝ կը մեկնէին դէպի Վիչենցա քաղաքը, որ իրենց հիմնական կայքը պիտի լըլար Սիմպոզիումի օրերուն:

Սեպտեմբեր 26ի առաւօտեան 10ին, Վիչենցայի Փալատեան հոյակապ «Թէաթրոյ Օլիմպիքոյ»-ին մէջ, տեղւոյն քաղաքապետին ներկայութեան, տեղի կ'ունենար բացումը գիտական առաջին նիստին, որու ընթացքին կը ներկայացուէին երեք աւագ զեկուցումներ՝ Սիմպոզիումի հիմնական երեք բնանիւթերու մասին: Գոլումպիայի համալսարանին Հայագիտութեան ամպլոնի վարիչ՝ Փրոֆ. Նինա Կարսոյեան կը խօսէր հայ մշակոյթի յուշարձաններուն ծանօթութեան առնչակից հարցերուն շուրջ: Դոկտ. Արմէն Զարեան կը կարգար «Հայաստանի Յուշարձաններու Պահպանման Կոմիտէ»-ի նախագահ Փրոֆ. Գրիգոր Հասրաթեանի զեկուցը՝ յուշարձաններու պահպանման հարցերուն վերաբերեալ: Փրոֆ. Հասրաթեան չէր կարողացած խտալիա ժամանել: Հոսկ՝ Հոռոմի համալսարանէն Փրոֆ. Փաօլոյ Բունէոյ կը վերլուծէր յուշարձանները փրկելու եւ վերապրեցնելու առաջադրանքին կապուած գիտարուեստական եւ օրինական հարցերը: Կէսօրէ վերջ, որ ազատ թողուած էր, հիւրերը առիթն ունեցան այցելելու Վիչենցայի զեղարուեստական կոթողները:

Սեպտեմբեր 27ի առաւօտէն սկսեալ իրարու յաջորդող 9 նիստերու ընթացքին՝ կարգացուեցան 47 հաղորդումներ, որոնց մեծ մասը կը հայէին «Ծանօթութիւն» բնանիւթին, 9 հատը պահպանումի եւ 5 հատը յուշարձաններու փրկութեան եւ վերապրումի հարցերուն: «Ծանօթութիւն» բնանիւթին վերաբերեալ հաղորդումներն ալ, իրենց կարգին, հետեւեալ կերպով կը դասաւորուէին. 6 հաղորդում՝ պատմական աղբիւրներու եւ վաւերացումներու մասին, 11 հաղորդում՝ արուեստի, 11 հաղորդում՝ ճարտարապետութեան, 5 հատ՝ մանրանկարչութեան մասին: Զեկուցողները կը պատկանէին 14 տարբեր երկիրներու եւ իրենց միջեւ կը գտնուէին 27 հայեր: Սիմպոզիումին պաշտօնապէս իրենց մասնակցութիւնը յայտարարած էին 113 հոգի՝ 22 երկիրներէ. պաշտօնապէս զեկուցում յայտարարած անձերէն յոմանք չէին կրցած ժամանել: Այս զեկուցումները, թէեւ չկարգացուեցան, սակայն պիտի հրատարակուին Սիմպոզիումի Գործերու հատորին մէջ, եթէ բնագիրները ժամանակին հասնին Կարգադիր Յանձնախումբին:

Հայագիտութեան կալուածին վերաբերեալ ուսումնասիրութիւններուն որպէս դրական արդիւնք՝ կ'արժէ յիշատակել հետեւեալ հրատարակութիւններու ներկայացումը, որ կատարուեցաւ Սիմպոզիումի աշխատանքներու միջոցին.

1. Երեւանի մէջ կայացած Հայ Արուեստի Միջազգային Բ. Սիմպոզիումի Գործերուն հրատարակութեան երեք հատորները — չորրորդը պատրաստութեան մէջ է* —: Հրատարակութիւնը խնամուած է Հայկական ՍՍՀ Գիտութիւններու Ակադեմիային կողմէ:

2. Հայ Միջնադարեան Արուեստին նուիրուած հոյակապ հատոր մը դերմաներէն լեզուով՝ հրատարակուած Արեւելեան Պերլինի մէջ, «Union Verlag» հրատարակչատան կողմէ, ղեկավարութեամբ Դոկտ. Հոպերթ Ֆենտէնի. *Kunst des Mittelalters in Armenien*:

3. Վիեննայի Միլիթարեան ձեռագրատան թիւ 697 ձեռագիր Աւետարանի բարձրորակ դունստիպ վերադարձրութիւնը, խնամուած Փրոֆ. Ներ Հելմութ եւ Հայտէ Պուչհաուզըն ամուրի կողմէ եւ հրատարակուած նոյնպէս «Ունիոն Ֆերլակ»-էն:

4. Փրոֆ. Վ. Բարսեղեանի նախաձեռնութեամբ կազմուած Հայկական Ճարտարապետութեան Լուսանկարչական Դիւանի նախագիծին հիմնական հաւաքածոյին առաջին հատորը մանրապիտակային դրութեամբ (microfiche):

Սեպտեմբեր 29ի Երեքշաբթի օրը ամբողջութեամբ տրամադրուած էր Վիչենցայի շրջակայքը զարդարող Փալատեան պալատներու եւ դարպասներու այցելութեան, որ զեղարուեստական վայելքի եղական պահեր ապրեցուց ներկաներուն: Իսկ 30 Սեպտեմբերի կէսօրէն վերջ, ժամը 6ին, Փիացցոլա սուլ Պրենթա աւանին «Բոնթա-րինի-Սիմէս» հոյակերտ պալատին մէջ տեղի ունեցաւ բացումը խաչքարերու ցուցահանդէսին՝ որ պիտի տեւէր մինչեւ 30 Նոյեմբեր: Այս ցուցահանդէսը իր ամբողջութեան մէջ կազմուած է խաչքարերու մեծադիր գունաւոր լուսանկարներէ եւ մասամբ ալ խաչքարերու կաղապարուած նմանատիպ վերադարձրութիւններէ: Կաղմակերպիչները կը յուսան որ այս ցուցահանդէսն ալ գտնէ՝ նախապէս կազմակերպուած հայ ճարտարապետութեան կոթողներու ցուցահանդէսին յաջորդութիւնը եւ շրջի զանազան երկիրներ:

Զուգընթացաբար «Երկիր եւ Մշակոյթ» (Terre et Culture) կաղմակերպութիւնը իր պատուիրակութեան զեկուցման առընթեր՝ եւ որպէս վիճարկութիւն սլաքակական հողին վրայ գտնուող պատմական վանքերուն պահպանումին համար տարուած աշխատանքներուն, պալատի մուտքին կից սրահին մէջ կաղմակերպած էր առանձնաբար լուսանկարչական ղեհահատելի ցուցահանդէս մը՝ որ մասնաւոր ուղղութեան արժանացաւ:

* Մինչ «Բազմավէպ»-ի ներկայ պրակը ժամուրի կը յանձնուի, յիշեալ չորրորդ հատորն ալ լոյս տեսած է արդէն:

Սեպտեմբեր 30-ի առաւօտեան նիստին վերջին պահը եւ յետմիջօրէի նիստը սահմանուած էին վիճաբանութեան, որ տեղի տուաւ կարծիքներու օգտաշատ փոխանակութիւններու:

Սիմպոզիումի եզրափակիչ նիստը տեղի ունեցաւ 1 Հոկտեմբերի առաւօտ՝ Վիչենցայի «Քորտելլինա» պալատին թիեփոլեան աւագ դահլիճին մէջ: Այս պալատին մէջ է որ հիւրընկալուած էին Կարդադիր Յանձնախումբին պաշտօնական հիւրերը՝ Սովետական Միութենէն եւ այլ երկիրներէ: Եզրափակիչ նիստի ընթացքին՝ Փրոֆ. Ա. Ալփակոյ-Նովելլոյ կադաց ուղեգծային սկզբունքներու բանաձեւ մը, քաղուած Սիմպոզիումի ընթացքին երեւան եկած մայր դադափարներէն, որ ընդունուեցաւ ջերմ ծափահարութիւններով: Սոյն բանաձեւը յանձնուած է Հայ եւ միջազգային մամուլին՝ իբրեւ Սիմպոզիումի եզրափակիչ խօսք:

Միեւնոյն օրը, կէսօրէն վերջ ժամը 2ին, ամբողջ քաղաքի մէջ մեկնեցաւ դէպի Վենետիկ, ուր ժամը 4ին սկսաւ այցելութիւնը Միութեաններու Ս. Ղազար Մայրավանքին, Թանգարանին ու Մատենադարանին: Սիմպոզիումի մասնակցողները գլխաւորուած էին՝ Հայաստանի Վարչապետի Տեղակալ Ա. Կիրակոսեանէ: Ջերմ ընդունելութիւն մը տեղի ունեցաւ վանքին միւլթարակերտ գրադարանի դահլիճին մէջ, ուր նախ բարի գալուստի ողջոյնը ուղղեց, յանուն Միութեաններու, Ակադեմիայի Վարիչ եւ Մատենադարանապետ Հ. Ներսէս Վրդ. Տէր-Ներսէսեան, որուն փոխադարձեց Տեղակալ Ա. Կիրակոսեան՝ նոյնքան ջերմ եւ սրտեղծ խօսքերով:

Վենետիկի քաղաքապետութեան կողմէ տրամադրուած մասնաւոր շոգենաւ մը, ապա, հիւրերը կը փոխադրէր դէպի Վենետիկի Քաղաքապետարանը՝ Քա-Պարսեթի: Քաղաքապետը Վենետիկէ բացակայելով, հիւրերը կ'ընդունուէին փոխ-Քաղաքապետին կողմէ, որ փ'ունենար ջերմ արտայայտութիւններ Հայ-իտալ եւ մասնաւոր Հայ-վենետիկեան մշակութային ու պատմական փոխ-յարաբերութիւններու մասին: Հուսկ, Քաղաքապետարանի խորհրդարանի դահլիճին մէջ կը կնքուէր վեցամեայ գործակցութեան պաշտօնական պայմանագրութիւն մը՝ ընդմէջ Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիային եւ Միլանի Հայ Մշակոյթի Ուսումնասիրութեան եւ Վաւերագրութեան Կեդրոնին:

Սիմպոզիումի կարեւորագոյն արդիւնքներէն մէկն է անշուշտ ասիկա, քանի որ գրաւականն է սկսուած աշխատանքին շարունակականութեան:

ԳԻՒԱՆ
ՄԻԼԱՆԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱԻԵՐԱԳՐՈՒՄԻ
ԿԵԴՐՈՆԻՆ

Ստորեւ՝ Հայ Արուեստի Միջազգային Գ. Սիմպոզիումին կողմէ վիչենցայի եզրափակիչ նիստին որդեգրուած բանաձեւը, հայերէն թարգմանութեամբ:

ԽՄԲ.

Հայ Արուեստի Միջազգային Գ. Սիմպոզիումի աւարտին, մասնակցողները կը խորհին հետեւեալ ուղեցոյց բանաձեւը ներկայացնել՝ բոլոր ուսումնասիրներուն եւ մասնագէտներուն, Հայ մշակոյթի կոթողները հիւրընկալող երկիրներու Յուշարձաններու Պահպանման Մարմիններու պատասխանատուներուն, միջազգային կազմակերպութիւններուն՝ որոնք պատմական եւ մշակութային աւանդներու պաշտպանութեան հարցերով կը զբաղին, եւ Մամուլին:

Նախ կը ճշտուի՝ որ «յուշարձանի» գաղափարը պէտք է ընդգրկէ, ինչպէս արդէն ընդունուած է յուշարձանային վերանորոգումի միջազգային պաշտօնագրերէն,

Ա.՝ Ամբողջ շրջապատը՝ որուն մէջ յուշարձանը գտնուած է, անկասկած՝ ոչ իբր գիպուածի արդիւնք:

Բ.՝ Անխտիր բոլոր վկայութիւնները, նաեւ անոնք որ փոքր կը կոչուին, անկախաբար ժամանակագրական նկատումներէ եւ գեղադրական կամ «գեղարուեստական» բնոյթի արժէքաւորումներէ:

Նկատի առած՝ աւերի, ցրուումի եւ պահպանման անստոյգ վիճակը՝ Հայ մշակոյթի յուշարձաններէն շատերուն, անհրաժեշտ կ'երեւի՝

Ա.՝ Շարունակել եւ համակարգել ցուցակագրութիւնի եւ քննադատական ծանօթութեան աշխատանքը:

Բ.՝ Արծարծել պատասխանատուութեան գիտակցութիւնը եւ ըզգայնութիւնը անոնց մէջ՝ որոնց մօտ կը գտնուի իւրաքանչիւր յուշարձան, որպէսզի պահպանուին յուշարձանին Փիզիքական ամբողջականութիւնը, գործածականութիւնն ու նշանակութիւնները՝ կարելիին չափ խուսափելով «Թանգարանի վերածումի», կողիացումի եւ վերաշինութեան յառաջընթացներէն:

Գ.՝ Փրկել եւ վերապրեցնել յիշեալ վկայութիւնները՝ մշակութային որոշ ուղեգիծի մը եւ դրական միջոցառումներու գործօն յանձնառութեամբ, զոր պէտք են որդեգրել այն մարմինները, իշխանութիւններն ու կառավարութիւնները՝ որոնց յանձնուած է յիշեալ աւանդը:

Ուշադրութեան կը յանձնուի պատմական-մշակութային յուշարձաններուն ազգային եւ ընդհանրական կրկնակ տարողութիւնը:

Մէկ կողմէ՝ բնաւ չմիջամտելու — ինչ որ կրնայ ընդունելի ըլլալ հնախօսական պարագային — կամ ամբողջապէս վերաշինելու ծայրայեղ դիրքորոշումներուն, միւս կողմէ՝ նմանադուքեամբ կամ միեւնոյն ռեիմ կիրարկումով վերամբողջացնելու ե՛ւս ասելի երկդիմի ընտրանքին դիմաց, վերստին կը հաստատուի այն ընդհանուր սկզբունքը՝ որ կը նախընտրէ պահպանումը, յարգելով յեղաշրջումի իւրաքանչիւր հանգրուան եւ իւրաքանչիւր վաւերագիր, ընդունելով միեւնոյն ատեն այն վերամբողջացումները՝ որոնք ստոյգ կերպով կրնան հիմնաւորուիլ եւ անյետադարձ չեն, երբ ատոնք հարկաւոր տեսնուին վերագործածութեան կամ նոր գործածութեան մը պահանջներէն:

Հիմնականօրէն կարեւոր կը թուի նմանապէս՝ որ «վերանորոգութեան» գործողութիւնը չսահմանափակուի լոկ յուշարձանի ֆիզիքական վերստացումին, այլ իբր նպատակ ունենայ միեւնոյն ատեն մշակութային ու մարդկային ընդհանուր պահանջները:

Իբր եղրակացութիւն կ'առաջարկուի.

Ա.— Խոստափել, ընդհանրապէս, վերականգնումի այն աշխատանքներէն՝ զոր չեն արդարացներ ո՛չ չափադանց «սէրը», ոչ ալ ազգային վարկի հնարաւոր շարժառիթներ:

Բ.— Կազմել մասնաւոր խումբեր՝ տարբեր ծագում ունեցող փորձադէտներէ, որոնք միասնաբար գործակցին պատրաստելու համար հարկաւոր միջամտութիւնները, ա՛յլապէս ընդգծելով միեւնոյն ատեն պատմական աւանդին համամարդկային տարողութիւնը:

Գ.— Ամէն կերպով նպաստել փոխադարձ գործակցութեան, ինչպէս նաեւ ծանօթութիւններու եւ փորձառութիւններու փոխանակութեան, առանց կաշկանդուելու գաղափարախօսական կամ քաղաքական նախապաշարումներէ եւ աղդակներէ:

Դ.— Հրաւիրել հայ սփիւռքին պատկանող Մարմինները, Ընկերակցութիւններն ու անհատները միացնելու իրենց ճիւղերն ու ձեռնարկները, յատկապէս տնտեսական գետնի վրայ, սատարելու համար միջամտութեան գործողութիւններուն:

ԻՏԱԼԱՀԱՅ ԳՐԱԴԱՏ ԵՒ ՇԱՐԺԱՆԿԱՐԻ ՔՆՆԱԴԱՏ

ՅՈՎՍԷՓ ԱՇՐԱՖԵԱՆ (GLAUCO VIAZZI)

ՈԳԵԿՈԶՈՒԱԾ ԱԿԱԴԵՄԱԿԱՆ ՇՈՒՔՈՎ

(Վեներտիկ, 31 Մարտ 1981)

31 Մարտ, Զորեղարթի օրը, Վենետիկի Միսիթարեան Հայրերու Մուրատ — Ռափայէլեան վարժարանին մէջ, ակադեմիական մեծ շուքով տեւեկոչութեամբ մարդկային եւ մշակութային դիմադիժը՝ շարժանկարի եւ գրականութեան իտալահայ մեծ գրադատ Յովսէփ Աշրաֆեանի (փաղաքաբար կոչուած Եռսիկ՝ մատերիմներու շրջանակին մէջ եւ ծանօթ Կլաուքոյ Վիազցի գրական ծածկանունով), երկրորդ տարեկիցին առթիւ իր վաղահաս մահուան՝ որ տեղի ունեցած էր 9 Մարտ 1980ին Սան Ռեմոյի իր լինակարանին մէջ: Հանգուցեալը ծնած էր Կրասնոդար 1920ին ու գեղատի՛ ժամանած Իտալիա, ուր միջնակարգի եւ լիկէոնի ընթացքը վատարած էր, 1933–38, Մուրատ–Ռափայէլեանի մէջ: Բացի առաջնակարգ գեր մը խաղաղէ պատերազմի տարիներուն եւ յետպատերազմեան իտալական քննադատութեան մէջ, Յովսէփ Աշրաֆեան քերած էր շատ կարեւոր, թէեւ քիչ ծանօթ, նպաստ մը նաեւ հայ գրադատութեան՝ յատկապէս ձեւական եւ ոճական վերլուծումի ուղղութեամբ, «Բաղմապէս»ի մէջ Յ. Ա. կամ Կ. Վ. սկզբնատառերով ստորագրած յօդուածներով՝ Մեծարենցի, Սիամանթոյի, Տէրեանի մասին:

Գիտադրոյցին քննիւթն էր՝ «Կլաուքոյ Վիազցի (Եռսիկ Աշրաֆեան) իտալական յետպատերազմեան մշակութային մէջ»: Նախաձեռնութիւնը սկսած էր Վենետիկի Պետական Համալսարանին հայագիտութեան ընթացքէն, որուն միացեր էին նոյն Համալսարանին Օտար Լեզուներու եւ Գրականութիւններու Մասնաճիւղը եւ Գեղարուեստական Ուսումներու Հաստատութիւնը, Հռոմի Համալսարանին Գրականութեան Մասնաճիւղը եւ Փերթրէի Արդի Լեզուներու Համալսարանական Հաստատութիւնը: Բովանդակ ելույթը կը հովանաւորուէր Վենետիկի Քաղաքապետարանին Մշակոյթի Հոգաբարձութեան